Ամեն տարի Լոս Անջելես մարզում հազարավոր ընտանիքներ անօթևան են:

Արդյո՞ք դուք անօթևան եք:
Մտահոգվա՞ծ եք, որ դուք կարող եք անօթևան դառնալ:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՁԵԶ ՕԳՆԵ՛Լ

Կան ծրագրեր, որոնք կօգնեն մարդկանց, ովքեր ստանում են CalWORKs (կամ եթե դիմեն, կարող են CalWORKs ստանալ): Այս ծրագրերը նախատեսված են այն ընտանիքների համար, ովքեր ունեն հետևյալ բնակարանային խնդիրներից որևէ մեկը.

- Վտարվում է,
- Ապրում է կացարանում/անցումային/խմբային ապրող հաստատությունում,
- Ժամանակավորապես մնում է ընկերների/ընտանիքի հետ,
- Քնում է մեքենայի/փոխադրամիջոցի մեջ,
- Ապրում է մոթելում,
- Քնում է փողոցներում,
- Փախչում է Ընտանեկան Բռնությունից,
- Դրամ չունենալու պատճառով, ուշացնում է բնակվարձը, կամ
- Տեղափոխվում է մշտական բնակարան և օգնության կարիք ունի վճարելու համար անվտանգության ավանդները և/կամ վարձակալության դրամը:

Լոս Անջելես մարզի Հասարակական Սոցիալական Ծառայությունների Վարչությունը ունի բազմաթիվ ծրագրեր, որոնք կարող են օգնել ձեզ ստանալ արտակարգ իրավիճակների ապաստան և ծառայություններ ձեր և ձեր երեխաների համար:

Թույլ տվեք օգնել ձեզ:

Դուք կարող եք խնդրել ցանկացած CalWORKs-ի իրավասության աշխատողին, որպեսզի ուղղորդի
ԱՆՕԹԵՎԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ

Ձեր DPSS-ի տեղական շրջանային գրասենյակը գտնվում է.

(District address & telephone number label here)

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՄԱՐՆԵՐ.

Լոս Անջելեսի մարզ

Արտակարգ իրավիճակներ	9-1-1
DPSS-ի հեռախոսակապի կենտրոն	(866) 613-3777
Ընտանեկան բռնություն/բռնաբարություն	(800) 585-6231
Երեխայի չարաշահում	(800) 540-4000
Տարեցների չարաշահում	(800) 992-1660
Ընկերներ դրսում	(626) 795-7607
Ինքնասպանության կանխարգելում	(800) 273-8255

Լրացուցիչ տեղեկությունների կամ հավելյալ ծառայությունների համար, ինչպիսիք են արտակարգ դրության կացարան, սնունդ կամ հագուստ, դուք կարող եք զանգահարել

2-1-1

ստանալու համար ծառայություններ ողջ Լոս Անջելես մարզի տարածքով:

Զանգահարե՛ք մեզ: Մենք այստեղ ենք ձեզ օգնելու համար:

County of Los Angeles
DEPARTMENT OF PUBLIC SOCIAL SERVICES

DPSS CALWORKS ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Հարստացնել կյանքը արդյունավետ և հոգատար ծառայության միջոցով»

DPSS CalWORKs-ի Բնակարանային Ծրագիր

Անօթևանների Օժանդակություն (HA) ծրագրի նպատակն է պահպանել ընտանիքներին միասին: HA-ը կարող է օգնել ձեզ ստանալ գումար ժամանակավոր և մշտական բնակարանի համար: Մենք ցանկանում ենք օգնել ձեզ և ձեր ընտանիքին բնակարան ձեռք բերել և խուսափել անօթևանությունից:

Արդյո՞ք դուք կարիք ունեք ապաստանի կամ այլ բնակության վայրի, որտեղ կարող եք մնալ կարճ ժամանակով:
Կան երկու ծրագրեր, որոնք կարող են օգնել ձեզ վճարել ծախսերը ապրելու համար՝ մոթելում/հյուրանոցում, վճարովի ապաստարանում կամ այն անձի հետ, ում հետ կունենաք կարճաժամկետ վարձակալության, ենթավարձակալության կամ համատեղ բնակության պայմանագիր: **Ժամանակավոր HA-ը** օգնում է ընտանիքներին, որոնք հաստատված են CalWORKs ստանալու համար կամ դիմել են CalWORKs-ի **և** ակնհայտորեն իրավասու են ստանալու օգնություն ընդհանուրը մինչև 16 օր: **Ընդլայնված ժամանակավոր HA-ը** օգնում է CalWORKs-ի իրավասու դիմորդներին, ովքեր փախչում են ընտանեկան բռնությունից՝ տրամադրելով երկու առանձին 16-օրյա միանվագ գումար՝ մինչև ընդհանուր 32 օր օգնություն՝ օգնելու ընտանիքին փախչել բռնարարից: Այս ծրագրերը տրամադրում են օրական $85 (մինչև չորս հոգանոց ընտանիքի համար) գումարած օրական լրացուցիչ $15 յուրաքանչյուր լրացուցիչ անձի համար, մինչև օրական առավելագույնը $145:

Ժամանակավոր Անօթևանի Աջակցության Ծրագիր +14-ը կարող է լրացուցիչ 14 օրվա ժամանակավոր ապաստանի վճարներ տրամադրել իրավասու CalWORKs և GAIN ընտանիքներին: Դուք կարող եք ստանալ մինչև $85 մեկ գիշերվա համար չորս հոգանոց ընտանիքի համար (գումարած $15 յուրաքանչյուր լրացուցիչ իրավասու ընտանիքի անդամի համար, առավելագույնը մինչև $145 մեկ գիշերը):

Արդյո՞ք դուք գտել եք վարձով բնակարան, սակայն օգնության կարիք ունեք տեղափոխվելու համար:
Գոյություն ունեն երկու ծրագրեր, որոնք կարող են ձեզ օգնել: **Մշտական HA ծրագիրը** կարող է օգնել ձեզ, եթե դուք անօթևան եք և հաստատված եք ստանալ **CalWORKs:** Մենք կարող եք օգնել ձեզ վճարել անվտանգության ավանդը, վերջին ամսվա վարձավճարը և կոմունալ ավանդները բնակության մշտական տեղ ապահովելու համար: Այս ծրագրին իրավասու լինելու համար՝

- Ձեր ամսական վարձավճարը պետք է կազմի Ընդհանուր Ամսական Ընտանեկան Եկամտի (TMHI) 80%:

Տեղափոխման Օժանդակություն (MA) ծրագիրը կարող է նաև օգնել հաստատված CalWORKs-ի և GAIN ծրագրի ընտանիքներին՝ մինչև $2,500 տեղափոխման ծախսերի համար (օրինակ՝ անվտանգության ավանդ, բեռնատար ավտոմեքենայի վարձավճար) և դուք կարող եք օգտագործել մինչև $405 գնելու համար գազօջախ և/կամ սառնարան, եթե վարձված բնակարանը դրանք չունի: Այս ծրագրին համապատասխանելու համար՝

- Դուք պետք է ունենաք վավեր ***ֆինանսական դժվարություն,*** ինչպիսիքն են՝ բժշկական վճարման կտրոններ, աշխատանքի կորուստ կամ այլ անկառավարելի գործոններ: Դուք պետք է տրամադրեք ֆինանսական դժվարության ապացույց:
- Ձեր ամսական վարձավճարը չի կարող անցնել TMHI-ի 80%-ը:

Արդյո՞ք ձեզ վտարում են, որովհետև դուք չեք վճարել ձեր վարձավճարը:

Գոյություն ունեն երկու ծրագրեր, որոնք կարող են ձեզ օգնել: **Մշտական HA վճարում** ծրագիրը կարող է դրամով օգնել ձեզ, վճարել ժամկետանց բնակվարձը: Իրավասու լինելու համար, դուք պետք է ձեր տանտիրոջից ունենաք վճարելու կամ դուրս գալու 3-օրյա ծանուցում և ձեր վարձավճարը պետք է լինի ձեր TMHI-ի 80%: Մենք կարող ենք օգնել ձեզ վճարել մինչև երկու ամսվա ընթացքում ժամկետանց վարձը:

Արտակարգ Իրավիճակների Աջակցություն Կանխելու Վտարումը (EAPE) նույնպես կարող է օգնել: Այս ծրագիրը նախատեսված է CalWORKs-ի և GAIN ծրագրի ընտանիքների համար, ովքեր գտնվում են անօթևան դառնալու վտանգի տակ: EAPE օգնում է ձեզ մինչև $5,000 վճարել մի քանի ամիս ուշացած վարձավճարի և/կամ կոմունալ ծառայությունների համար: Դուք կարող եք դրամ ստանալ այս ծրագրից մի քանի անգամ, մինչև օգտագործեք լրիվ $5,000-ը: **Նշում. $5,000 մեկ անգամ կյանքի ընթացքում սահմանափակումը EAPE ծրագրի համար տարածվում է CalWORKs և GAIN ընտանիքների վրա, որոնք առաջին անգամ ծրագրի դիմորդներն են, սկսած 2020թ. հոկտեմբերի 1-ից:**

Արդյո՞ք օգնության կարիք ունեք կացարան կամ այլ ռեսուրսներ գտնելու հարցում:

Անօթևանների Գործի Կառավարում (HCM) ծրագիրը հետևում է ընտանիքների կարիքները, ովքեր անօթևան են կամ անօթևան դառնալու վտանգի տակ են և օգնում է գտնել ռեսուրսներ և ծառայություններ, որոնք կարող են աջակցել ձեզ: Խնդրեք ձեր իրավասության աշխատողին, որ ուղղորդի դեպի HCM ծրագիր:

Ունե՞ք օգնության կարիք վճարելու ձեր վարձավճարը:

4 ամսյա վարձակալության օժանդակություն (RA) ծրագիրը կարող է օգնել: Եթե դուք անօթևան CalWORKs և GAIN ընտանիք եք և տեղափոխվել եք մշտական բնակարան (կամ ինքնուրույն կամ օգտագործելով **Մշտական HA** կամ **MA ծրագիրը**) RA ծրագիրը կարող է օգնել ձեզ մինչև $500 ամսական (կախված ընտանիքի չափից) մինչև չորս (4) անընդմեջ ամիսներ: Գումարը պետք է օգտագործեք **չսուբսիդավորվող** վարձը վճարելու համար:

Եթե դուք վերջերս ստացել եք **Մշտական HA Arrearages վճարումներ** և/կամ **EAPE** վճարումներ կանխելու համար ձեր ընտանիքի վտարումը, ապա դուք կարող եք նաև իրավասու լինել **4 ամսյա RA ծրագրին: CalWORKs և GAIN ընտանիքները, որոնք ընդգրկված են Ընտանեկան Կայունացման Ծրագրի մեջ կարող են ստանալ լրացուցիչ չորս (4) ամիս վարձավճարների սուբսիդիայի վճարումներ՝ ընդհանուր առմամբ ութ (8) ամիս վարձակալության օժանդակության համար:**

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հ. Արդյո՞ք մարզը կվերցնի իմ երեխաներին, որովհետև մենք անօթևան ենք:
Պ. Ոչ: Անօթևան լինելը հանցագործություն չէ և այն ձեզ վատ ծնող չի դարձնում: Միայն անօթևան լինելը պատճառ չէ, որպեսզի երեխաները տեղադրվեն պաշտպանիչ խնամակալության տակ:

Հ. Արդյո՞ք իմ դրամական օժանդակությունը և/կամ CalFresh նպաստները կդադարեն կամ կնվազեցվեն, քանի որ մենք անտուն ենք:
Պ. CalWORKs դրամական օժանդակությունը չի կարող դադարեցվել միայն այն պատճառով, որ ընտանիքը անտուն է: Սակայն, համաձայն CalFresh կանոնների, ձեր CalFresh նպաստները կարող են նվազել կախված ապաստանի համար վճարված գումարից: HCM ծրագիրը կարող է ձեզ տալ ուղղորդում դեպի այն վայրերը, որոնք կարող են օգնել ձեզ տրամադրելով լրացուցիչ պարենային ապրանքներ, եթե դրանց կարիքն ունեք:

Հ. Արդյո՞ք կարող է HCM ծրագիրը դեռևս օգնել ինձ, եթե ես անցյալում օգտագործել եմ անօթևանության ծրագրերը:
Պ. Այո՛: Նույնիսկ, եթե ձեր ընտանիքն արդեն օգտագործել է DPSS-ի բոլոր անօևանության նպաստ -ները, դուք դեռ կարող եք օգնություն ստանալ HCM ծրագրից: HCM ծրագիրը պետք է համոզվի, որ դուք ստանաք բոլոր առկա նպաստները և կօգնի ձեզ ստանալ լրացուցիչ ծառայություններ տեղական գործակալություններից և ծառայություն մատուցողներից, ովքեր կարող են օգնել ձեզ շտապ կացարանով, սննդով, հագուստով և շատ այլ ծառայություններով:

Հ. Եթե անօթևանության նպաստներն արդեն ստացվել են, արդյո՞ք COVID-19-ի պատճառով անօթևան դարձածները կարող են կրկին նպաստներ ստանալ:
Պ. Այո. Անօթևանների ծրագրի նպաստները կարող են կրկին ստացվել «աղետի» բացառությամբ, եթե անօթևանությունը կամ անօթևանության ռիսկը պայմանավորված է COVID-19-ի հետ կապված խնդիրներով:

Հ. Պետական HA ծրագրի համար, արդյո՞ք «աղետի» COVID-19 բացառության համաձայն արտոնություններ ստանալը հաշվում է այլ բացառությունների իրավասության դեմ:
Պ. Ոչ: «աղետի» բացառության ներքո HA նպաստների ստացումը չի հակասում ընտանեկան բռնության, անբնակեցվածության և ֆիզիկական/հոգեկան հիվանդության պատճառով այլ բացառությունների իրավասությանը, որոնք 12 ամսվա ընթացքում միանվագ սահմանափակվում են:

DPSS CalWORKs Բնակարանային ծրագրի նպաստները տրամադրվում են ՄԵԿ ԱՆԳԱՄ ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Որոշակի բացառություններ կարող են լինել, հատուկ հանգամանքների դեպքում: Մանրամասների համար կարող եք հարցնել CalWORKs-ի իրավասության ցանկացած աշխատողի: